ՎԴԻՊ՝ ԽԵԼԱՑԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ



Ի՞նչ է ՎԴԻՊ-ը

Վնասակար օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքարը (ՎԴԻՊ) կամ բույսերի ինտեգրացված պաշտպանությունը գյուղատնտեսությունում վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ պայքարի կայուն և գիտականորեն հիմնավորված մոտեցում է:

Ի տարբերություն ավանդական մեթոդների, որոնք հիմնականում հիմնված են քիմիական թունաքիմիկատների վրա, ՎԴԻՊ-ը համատեղում է պայքարի տարբեր մեթոդներ՝ բնապահպանական, տնտեսական և սոցիալական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

ՎԴԻՊ-ը մշակաբույսերի պաշտպանության ժամանակակից մոտեցում է, որը

- նվազեցնում կամ բացառում է թունաքիմիկատների օգտագործումը,
- կայուն կերպով պաշտպանում է մշակաբույսերը,
- պահպանում է հողի, ջրի և մարդկանց առողջությունը:



Ինչո՞ւ է կարևոր նվազեցնել թունաքիմիկատների օգտագործումը

ՎԴԻՊ-ի կիրառման առավելությունները հստակ են՝ քիմիական նյութերից կախվածության նվազեցում, կենսաբազմազանության պահպանում, հողի և ջրի վիճակի բարելավում և կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ գյուղատնտեսական համակարգերի դիմակայունության բարձրացում: Ավելին, ՎԴԻՊ-ը նպաստում է արտադրանքի որակի և սննդի անվտանգության բարելավմանը:



ՎԴԻՊ-ը ներառում է մի քանի փոխլրացնող բաղադրիչներ:

Դրանք, ամենից առաջ, ագրոտեխնիկական այնպիսի մեթոդներն են, ինչպիսիք են ցանքաշրջանառությունը, մշակաբույսերի դիմացկուն սորտերի ընտրությունը, ցանքի ժամանակի օպտիմալացումը և հողի կառավարումը: Այս միջոցառումները նպատակ ունեն ստեղծել վնասատուների զարգացման համար անբարենպաստ պայմաններ:



Երկրորդ, դրանք կենսաբանական մեթոդներն են, որոնք ներառում են վնասատուների բնական թշնամիների՝ գիշատիչ միջատների, մակաբույծների և միկրոօրգանիզմների օգտագործումը:Երրորդ, դրանք մեխանիկական և ֆիզիկական մեթոդներն են, ներառյալ ձեռքով վնասատուների հավաքումը, թակարդների տեղադրումը, պաշտպանիչ արգելքների (ցանցեր, թաղանթներ, ծածկոցներ) օգտագործումը, բուսական մնացորդների հեռացումը և հողի մշակումը:





ՎԴԻՊ-ի հիմքը կանոնավոր մշտադիտարկումն է: Ֆերմերները մշտադիտարկում են բույսերը՝ որոշումներ կայացնելու համար՝ հիմնվելով փաստերի, այլ ոչ թե քիմիական նյութերի վրա: Սա ՎԴԻՊ-ի հիմնական սկզբունքն է. կանոնավոր մշտադիտարկումն օգնում է վաղ հայտնաբերել վնասատուներին և խուսափել թունաքիմիկատների ավելորդ օգտագործումից:



Գործնական խորհուրդներ

- Շաբաթը մեկ անգամ ստուգե՛ք դաշտերը (սա կօգնի ժամանակին նկատել խնդիրները՝ վնասատուներ, խոնավության պակաս կամ հիվանդություններ և կանխել բերքի կորուստը):
- Օգտագործե՛ք թակարդներ (կպչուն գոտիներ, դեղին և կապույտ կպչուն թերթիկներ, ֆերոմոնային և լուսային թակարդներ, սննդային խայծեր և այլն):
- Խրախուսե՛ք օգտակար միջատներին (զատիկներ, ոսկեաչիկներ, բզզան ճանճեր և այլն):
- Խուսափե՛ք կանխարգելիչ ցողումից (սա կօգնի պահպանել շրջակա միջավայրը և խնայել միջոցները):



ֆերոմոնային թակարդ



կպչուն թակարդ





կպչուն գոտի




Քիմիական թունաքիմիկատները ՎԴԻՊ-ի շրջանակում համարվում են վերջին միջոցը և օգտագործվում են միայն այն դեպքում, երբ մշտադիտարկումը ցույց է տալիս, որ այլ մեթոդներն անբավարար են: Նախապատվությունը տրվում է ցածր թունունակություն ունեցող և ոչ թիրախային օրգանիզմների և շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցություն ունեցող արտադրանքներին: Մեկ այլ կարևոր սկզբունք է թունաքիմիկատների ճիշտ և նպատակային օգտագործումը՝ վնասատուների մոտ դիմադրողականության զարգացումը կանխելու համար:









ՎԴԻՊ-ի առավելությունները ֆերմերների համար

- Քիմիական նյութերի ձեռքբերման ծախսերի կրճատում
- Ավելի կայուն բերք
- Հասանելիություն օրգանական շուկաներին
- Հողի երկարաժամկետ բերրիություն







ՎԴԻՊ-ի ավելի լայն կիրառումը Հայաստանում հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով էկոհամակարգերի խոցելիությունը, սահմանափակ ջրային պաշարները և ավելի կայուն գյուղատնտեսական մոդելների անցնելու անհրաժեշտությունը: ՎԴԻՊ-ի զարգացումը պահանջում է ինստիտուցիոնալ աջակցություն, ֆերմերների վերապատրաստում, տեղեկատվության հասանելիություն և գիտական հետազոտությունների ընդլայնում:









Այսպիսով, ՎԴԻՊ-ը ոչ միայն մեթոդների ամբողջություն է, այլև կայուն գյուղատնտեսության համար համալիր ռազմավարություն, որը նպատակ ունի հավասարակշռել արտադրողականությունը, էկոլոգիան և մարդկային բարեկեցությունը:

Սույն տեղեկատվական նյութը պատրաստվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Ոչ քիմիական այլընտրանքներ կլիմայական առումով խելացի նորարարական գյուղատնտեսությունում Հայաստանի հիմնական գյուղատնտեսական մարզերում՝ Արմավիրում և Արարատում» ծրագրի շրջանակում:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ
շրջակա միջավայրի» ՀԿ

ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2
Հեռ.՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ officeawhhe@awhhe.am
Վեբ կայք՝ http://www.awhhe.am
ԵՐԵՎԱՆ 2026